

## ՄՏ. ՆԱԶԱՐԵԱՆՅԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ 1).

[ (Գրւած Վ. Ազուլեցի Մեւրոն Գասպարիչ Փանեանցին) .

## 1.

Նոյեմբերի 22-ին. 1855. Մոսկվա.

Իմ շատ սիրելի և պատուելի եղբայր

Մելքսեմ Գասպարեան փանեանց.

Ձեր շնորհալի նամակը այս նոյեմբերի 5 թուականից<sup>2)</sup>, որին սպասում էի շատ անհամբեր սրտով, հասաւ ինձ այսօր, և այսօր իսկ կամենում եմ պարտավճար լինել Ձեզ ոչ որպէս պարտապան մի պարտատիրոջ, քան լիցի, այլ որպէս բարեկամ, որ հոգով չափ կարօտ էր խօսել իւր բարեկամի հետ որ ամենեին սիրելի և նազելի էր նորա համար: Շատ ցաւեցայ լսելով թէ Ձեր ամուսնու բերանից և թէ Ձեր յատուկ նամակից թէ այդքան նեղութիւն էք կրել ճանապարհին կովկասեան սարերի մէջ. բայց և ժամանակը անպիտան ժամանակ էր. դարմացք չէ, որ Գուք անձրևի տակ, ցելսի մէջ ամբողջ ժամեր ոտով ճանապարհորդելով, հազ ու կրծացաւութիւն էք ստացել. բայց խնդրեմ և կրկին անգամ խնդրեմ խելացի կերպով հոգարարձու լինել ձեր առողջութեան ու կեանքի համար որ հարկաւոր էր ոչ թէ միայն քեզ և քո ընտանիքին, այլ և քո բարեկամներին, քո ազգին, Հայկական մարդկութեանը: Ձեր ընտանիքը, փառք Աստուծոյ, առողջ են. ևս հանդիպում եմ նոցա, ինչքան կարելի էր յաճախ. ձեր ամուսինը անցեալ կիւրակէ մի կէս ժամ

1) Այս նամակները թւով 51 հատ են. Ինչպէս № 1 նամակի զիմուսից երեւում է. Նազարեանի եւ Փանեանցի միջեւ 56 թւի նոյեմբ. 22-ից առաջ էլ նամակադրութիւն եղած պիտի լինի, բայց, դժբախտաբար, հանգուցեալ Փանեանցի թղթերի մէջ մենք չգտանք այդպիսին: Գրափոխարէն, բացի թւածս 51 նամակներից, մենք ձեռքի տակ ունենք եւ տպագրութեան կյանձնենք Նազարեանի ուրիշ 11 — այսպէս առած — շնորհաւորական նամակները. որոնցով նա շնորհաւորում է Փանեանցի անւանակոչութեան տօնը: Յ. Տէր-Յակ.

2) Բոլոր նամակների մէջ հարազատօրէն պահպանւած են հեղինակի ուղղագրութիւնը, կէտագրութիւնը եւ միւս լեզուական-գրական առանձնաշատկութիւնները: Յ. Տ. Յակ.

մեր մօտ էր: Օր չէ անց կենում մեր տանը, որ ձեր անունը, ձեր քաղցր անունը չիշենք մեր մէջ. բայց թէ ինչպէս ծանր էր ինձ համար այսքան ժամանակ զուրկ լինել ձեր քաղցր բարեկամական ընկերակցութիւնից որ միշտ գերազանց է եղել իմ համար քան թէ մարմնաւոր եղբայրակցութիւնը, չեմ կարող ասել, Ձեր գնալուց յետոյ որբացած եմ եւ միանգամայն Շէյխեանցի երեսը շատ փոքր եմ տեսնում, և տեսութեան ժամանակին եւ օտարօտի մտքեր եմ լսում: Դա, մի խօսքով, ինչպէս երևում է, սառնացած է երևում այն մտածութիւններից որոնց հիմքը էր հայրենասիրական բարեկամակցութիւն: Շէյխեանցը կամենում է՝ գալոց տարու Յունվարին վերադառնալ դէպ ի Շուշի և գրել է իւր ծնողներին որ նորան նշանեն և հարսն պատրաստեն նորա համար: Կաւ բան է, միայն փոքր անսովոր իմ ճաշակիս համար:

Աւետիք քեզ երկու կողմից. իմ աշխատութեան պտագրութիւնը հասել է անա 25 թերթին, ուրեմն մնում են դեռ եւ 8 թերթ տպելի. սոքա եւ պատրաստ կը լինին գալոց տարու Յունվարի վերջին: Այս առաջին հատորն էր սորանից յետոյ իսկոյն կը սկսանեմ երկրորդ հատորը: Իմ շարագրութիւնը յաւելանալով 10 թերթ քան թէ իմ պայմանն էր տպագրութեան հոգարարձու պարտնների հետ, համաձայնեցան զօրա յաւելացնեն 200 մանէթ: Միս բարի համբաւը այն է, որ Հիւսիսսփայլ օրագրի մասին տեղեկութիւն է գրում ինձ Պետերբուրգից պարոն Մուխլինսկիյ պրօֆէսսօրը, որ շուտով կը վճովի գործը, և ինչպէս երևում է այս տարին վերջանալուց յառաջ, և ինչպէս գրած է ինձ, պիտոյ է տէրութիւնը իմ կամքին թողու գործ ունենալ կամ Պետերբուրգեան ցննչօրի և կամ Թիֆլիզեանի հետ:

Ձեր նամակից տեսնում եմ, որ Դուք փակել էք ձեր սիրտը և տրտում էք և չը կամիրք ոչ հոգևորի և ոչ աշխարհականի մօտենալ. այդ լաւ չէ. պիտոյ է մեզ ամեններին մօտենալ ինչքան կարելի է, պիտոյ է պողովաւը գայլախաղին զարկել որ կայծեր դուրս ցայտվեն. այլապէս չէ կարելի ուրիշներ զբայ ներդործել. պիտոյ է փիլիսոփայ լինել, հաղորդակցութիւն առնել մարգերի հետ, մարդ շօշափել ու քննել և մարդիկ որսալ ճշմարտութեան ուսկանի մէջ:

Մեր հասարակաց բարեկամ սրբազան Մատթէոսը շատ ուրախալից պատասխան ստացաւ Մինիստրից այն թղթին, որ եպիսկոպոսը մատուցել էր Թագաւորին Մինիստրի ձեռքով: Սա գրում էր թէ նորին կայսերական Մեծութիւնը բարեհաճել է հրամայել, որ եպիսկոպոսը հաստատ մնալով իր պատուի մէջ ճանապարհ ստանայ իւր վիճակը կառավարելու օրէնքի հիման վերայ, եւ ասում են, թէ Մինիստրից թուղթ է գնացած կովկասեան տեղակալ Բարեատինսկու վերայ, որ սա հարց ու խնդիր առնէ կաթողիկոսից թէ

դա ինչ իրաւունքով կարողացել է մի կայսերահաստատ վիճակաւոր առաջնորդ ձգել իւր իշխանութիւնից: Մինչև այժմ ոչ ինչ լուր չը կայ Մինիստրից, թէ ինչպէս նա կամի ճանապարհ տալ եպիսկոպոսին, գործ յառաջ տանելու համար՝ բայց երևում է, շուտով պիտոյ է սկսանին մինիստրի գործակատարութիւնքը այս մասին:

Խնդրեմ գրել ինձ այնքան յաճախ, ինչքան կարող էիր. խնդրեմ ուրախ պահել ձեր միտքը և ամենեին միամիտ լինել ձեր ընտանիքի մասին. բայց խնդրեմ նոյնպէս գործերդ աւարտած լինելով Ձեր պատուելի եղբոր հետ, շուտով սրժանացնել մեզ ձեր քաղցր և քաղցր տեսութեանը: Իմ ամուսինը որ ձեզ սիրում է և պատուում է իբրև եղբայր, շատ և շատ ողջոյն է ուղարկում ձեզ. իմ զաւակները նոյնպէս իմ բարեկամական ողջոյնս յիշեցէք ձեր ընտանիքին Աքուլիսումը:

Իմ հասցէս.

Ձեզ յարգող և սիրող

Степану Исаевичу Назарьянцу, հայ եղբայր Ս. Նաղարեանցի:  
3. профессору Лазаревского Института въ Москвѣ.

## 2.

Պատուելի եղբայր և սիրելի բարեկամ մեր

Մելքոն Փանեանց.

Անա 18 օր է, որ մեր հրաժարված ենք միմեանցից և հետացած միմեանցից եթէ ոչ սրտով և հոգով, գոնեայ հողեղէն տարածութեամբ. բայց սա ոչինչ է. ճշմարիտ սէրը և բարեկամութիւնը կարող է մտաւորել և շատ հեռաւորները, բայց որում սրտի և հոգու համար չը կայ նիւթական խաւիան: Ես չը կամիմ յիշեցնել Ձեզ այն ախուր իրողութիւնը մեր ազգի մէջ, որ սոցա և մտաւորքը և զրացիքը միշտ հեռն են միմեանցից, ընկերսիրութիւն և բարեկամասիրութիւն մի անսովոր բան լինելով դոցա մէջ: Մեր ճանապարհը Մոսկովայից մինչև Պետերբուրգ եղաւ բաւական արագ և բարւոք, բայց Պետերբուրգից, մինչև Դորպատ շատ չարչարանք քարչեցինք, 320 վերստ տարածութիւն ճանապարհորդելով 41 ժամի մէջ, արքունի կառքի մէջ, վեց մարդ միասին նստելով: Մեր ուղեկիցքը բաւական խառն մարդիկ էին. կրթեալ և անկրթ մարդիկ, Ռուսք և գերմանացիք, արք ու կանայք, պատանիք և միջահասակք: Կօզլով պրօֆեսորը Ղաղանի, որ իմ բնկեր է եղած Դորպատում, շատ զարմացք բերեց իմ վերայ որպէս շատ կրթեալ և ասողջամիտ ու ազատախօս մարդ ընդդէմ իւր և իմ հակառակորդ մարդու, որ զօրական ծառայութեանից արձակված գնդապետ (պոլկովնիկ էր), Սորան լաւ տրորեցինք մեք երկուսով. և կատաղած չը գիտէր ողորմելին

Թէ ինչպէս փրկէ իւր անձը մեր ծակող ճանկերից. կամայ և ակամայ ստիպվեցաւ համաձայնել մեզ:

Իմ կեանքը Գորգատի մէջ հոսում է շատ հանդարտ և թեթև. Ֆրիդրիկոսի գործը համարեան թէ վերջացած է. նա կրնդունովի այն դասատուներ որին արժանի էր: Այստեղի մարդիկը շատ քաղցր և հեզ են, նոցա մաղրասիրութիւնը և քաղաքավարութիւնը անպատմելի: Անցեալ կիւրակէ հացկերութեան հրաւիրուած էի տեղիս համալսարանի Հոգարարձու և Սենատոր Բրատկէի մօտ. թէ ինչպէս այս պատուելի ծերունին ընդունեց ինձ, երկար էր պատմել ձեզ: Ասեմ միայն այսքան, որ ինձ ցանկալի կը լինէր, որ մեր Հայոց տղայքը, որ այստեղ ուսանում էին, մի փոքր հեզութիւն, քաղաքավարութիւն և մարդասիրութիւն ուսանէին:

Յոյս ունեմ շուտով տեսանելու և համբուրելու ձեզ, ինչքեմ որջունեցէք ինձանից ձեր պատուելի ամուսինը, պարոն Սոջայեանցը, ձեր զոքանչը և մնացէք հաւատացած, որ ձեզ անխօփօս սիրով սիրում է:

Ձեր հարազատ կղբայր և բարեկամ

Ս. Նազարեանց

Յուլիսի 18-ին, 57.

Գորգատ:

3.

Ազնիւ Բարեկամ,

Ես հիւանդ եմ և կարող չեմ ինքս գալ Ձեր մօտ մի հարկաւոր բանի վերայ խօսելու: Ձեր հետ Հիւսիսամիայի 12 համարը էգուց կաւարտովի ամենին, 6 թերթ ամբողջապէս և կերթայ ցենսուրային: Այժմ մնում է մեզ մտածելու գալոցքի մասին, եթէ այսուհետեւ պիտոյ էր ինձ գործ ունենալ ազգի հետ: Իմ ստացած նամակները Հաչատրխանից, Նոր Նախիջևանից և Բագուի ու Շամախու կողմերից շատ տխուր և անմխիթար են. մի տեղ հացը թանգ է, միւս տեղ ժողովրդի մէջ խառնակութիւն կայ, մի այլ տեղ ժողովուրդը գիրք և զրի զօրութիւնը չ'գիտէ. մի խօսքով լուրեր, որոնցից պիտոյ էր եզրակացնել որ մեր ազգին ոչինչ հարկաւոր չէր: Գործը մնում է այժմ Պետերբուրգի և Մոսկվայի Հայոց հասարակութիւնների ուսերի վերայ: Վայ Ձեզ. բայց ոչ, մի յուսահատիք. Աստուած կամենում է Ձեզ մի պարծանք պատրաստել, որից, ինչպէ՛ս տեսնում եմ, Ձեր և մեր հայրենակիցքը այլ քաղաքների մէջ, պիտի վատթարապէս անմասն ու անբաժին մնան: Իմ կարծիքս այսպէս է. եթէ Պետերբուրգեան Հայերը, ինչպէս լսում եմ, կամին յանձն

առնուլ տպագրութեան 'ծախքը, թէպէտ հաւաստի տեղեկութիւն չունենմ, որքան է նոցանից ստանալի արծաթը որովհետեւ ընդհանրապէս միայն լսած եմ մի տեղեկութիւն Ստեփանեանի եղբոր բերանից, նորա պատուիրելով. — ուրեմն մեր և Ձեր կողմից պիտոյ էր նոյնպէս աշխատել Մոսկվայի մէջ, մանաւանդ որ այժմ ընկերութիւն կայ մեր մէջ: Եւ ինչու համար է ընկերութիւնը, որ այսպիսի դժուարութեան մէջ, ճանապարհ չ'գտնէ իւր համար օգնելու իւր ազգի մի հատ արժանաւոր օրագրին: Բայց այս տեղ Դուք և ես զգուշութեամբ պիտի ընթանանք, ընկերութիւնը նոր է: դեռ ես ոչ ոք ստորագրելի չէ որպէս մասնակից ընկերութեան, այլ և ես, իբրև հրատարակիչ, գոնեայ մեր Հայերի մէջ, անպատշաճ եմ տեսանում իմ կողմից ընկերութեան մէջ խօսք բանալ և առաջարկութիւն առնել, թէ այս բոպէիս առաջին հոգալի բանն էր փրկել ազգային պարծանքը, հոգաբարձու լինելով Հիւսիսափայլի պահպանութեան համար: Այս գործը պարտական եմ Դուք մի քանի րնկերներով յառաջ բերել ընկերութեան մէջ իբրև մի առանձին, այս բոպէիս հոգալի բան:

Պարոն Արամխանեանցը <sup>1)</sup> ինքը ժուռնալի մասին խօսք ձգեց Ձեր տան մէջ. ուրեմն այս բոպէիս թող հոգանք ընկերութեամբ այս բանին համար, որ իբրև մի ցաւ տազնապեցնում է մեր մարմինը. յետոյ յառաջ կերթայ ընկերութեան համար. կարծեմ, դուք կը հասկանաք ասածին միտքը: Բայ ի նորանից, որ դա ազգի անխարդախ, ճշմարտաբարող բերանն էր, դրանով պիտի թևեր ունենայի և ներգործելու, ընկերութեան օգուտը յառաջ տանելու, ոչ քե միայն խօսելով և առաջարկելով, այլ և գործով հանդէս գալով, թէև իմ տուրքը իբրև աղքատի տուրք, բայց լինելով առատատուութեամբ, զոր օրինակ հարիւրաւոր, անպատճառ լինելու էր ամաչեցուցիչ ուրիշ հարստականներէ համար, որ ըստ կարողութեան պիտոյ էր զոհարել գտանվէին, մի ազգային գործ գոյացնելու համար, դորանով առաքինական և ազգասիրական գործեր զլուխ բերելու համար, որոնց մասին ի հարկէ նախ և յառաջ խօսակցութիւն կը լինի ընկերութեան մէջ, ի գիտութիւն ամենեցուն, թէ ինչ բանի համար արծաթ էր ձգվում ընկերութեան գանձանակի մէջ:

Մոսկվայի մէջ մեր ընկերութեան հանդիսուժ պիտոյ է առաջարկութիւն լինի վեհանձնաբար զոհարելութիւնք յանձն առնել Հիւսիսափայլի պահպանութեան համար, որ առաջին հոգալի բանն է այս բոպէիս: Եթէ մի 2000 Պետերբուրքում հաւաքվի, դոյնքան

• 1) Խօսքը հանդուցեալ Ա. Արամխանեանի հօրեղբոր, Հայրապետ Արամխանեանի մասին է, որ այդ ժամանակ գտնուժ էր Մոսկուայում առեւտրական գործերով: Յ. Տ. Յակ.

ևս Մոսկվայի մէջ, կը մնան մեզ մասնաւոր կամ անյուսալի օգուտք այլ քաղաքներից, որ յետոյ կերեին. Ձեր գործը, անտարակոյս, պիտոյ է ամօթապարտէր մեր վատթար Հայերը միւս քաղաքների մէջ. բայց և Դուք աւելի լուսաւորքդ և ընտիրքդ ազգի մէջ պարտական էիք այդպիսի օրինակ յանդիման կացուցանել ազգի առաջն. գուցէ գրանով կը յառաջանայ և մի բարի նախանձաւորութիւն: Լաւ իմացէք, որ Դուք այստեղ գործ ունիք թշնամիների հետ, Ձեր և մեր վատթար հայրենակիցների հետ. ուրեմն պէտք է Ձեզ ամենայն առիւծութեամբ պատերազմել, որ յազթէք և ոչ թէ յազթվիք: Ես կանգնած եմ Ձեր համար գրչի սուրս ձեռքիս. միայնակ մի թողէք ինձ ապա թէ ոչ, ամենեքեանքս միասին կը ջախջախվենք: Եթէ կամիք այս մասին երես առ երես խօսել իմ հետ, պատրաստ եմ, երբ հաճոյ է Ձեզ:

Մնաք բարեւաւ.

Ձեր անխարդախ յարգող և սիրող բարեկամ

30-ին Հոկտ. 1860,

Ս. Նազարեանց

Մոսկվայ.

4.

Ազնիւ բարեկամ,

Անա գրեցի և ուղարկում եմ Ձեզ մի քանի բառ <sup>1)</sup> Ձեր վաճառական ժողովի վրայ. նախ և յառաջ ցոյց տալով թէ ինչ ասել է վաճառականութիւն ընդհանրապէս, թէ ինչ տեղում է վաճառականութիւնը եւրոպայի մէջ և ինչ աստիճանի վերայ մեր մէջ. և թէ ինչ էին դորա պատճառքը. խօսելով մեր ցաւերի վերայ, ցուցանում եմ և բժշկական դեղը, ինչքան որ այս բոլորիս կարող էր հասուցանել դա մի բարեմիտ առևտրական ժողով, եթէ կամէր հասկանալ, որ Հայը լինելով վաճառական, վերջացել չէր լինելուց բանական ու բարոյական մարդ. այլ դորա հակառակ, երկուքն ևս պիտի միաւորվին միշտ մինի մէջ. ազնիւ մարդ և ազնիւ վաճառական, կամ ազնիւ վաճառական և ազնիւ մարդ:

Հարկաւոր համարեցի խօսել մի փոքր սաստիկ մեր Հայերի վաճառականութեան պակասութիւնների վերայ, որ մի փոքր դարթնին մեր Հայերը և ջերմ սրտով ոտք կոխեն բարեկաւուրութեան ճա-

1) Այդ գրածքը նախագծի նման մի բան է եւ կազմած է 2 մասից—ա. մի բաւական ընդարձակ յառաջարկից եւ բ. 9 կէտ կանոնադրութիւնից. Նամակների շարքը վերջանալուց յետոյ այդ եւս կյանքներ տպագրութեան. Յ. Տ. Յ.:

նապարհի վերայ, ինչ չափով կարելի է դա մի ամենևին անսպասարատ ազգի մէջ, որ ամենայն բանով պակասաւոր է: Ես վաճառական մարդ չեմ արդարև, բայց վաճառականութեան պայմանքը շատ լաւ գիտեմ. որովհետև դոքա շատ ծաղկած ուսուցիչն են Եւրոպայի մէջ. այդ պայմաններին ոչ մինը չը կայ մեր տգէտ Հայի մէջ, թէպէտ և սա ասվում է վաճառական. ինչ և իցէ:

Խնդրեմ դորձ դնել իմ գրուածը, ինչպէս արժան կը համարէ Ձեր խոհականութիւնը. պիտոյ է ամուր և հաստատ մնալ Ձեր արդար և խելացի առաջարկութիւններին վերայ. Ձեզ երբէք պատիւ չէ գասակից լինել մի ախմար և կորած խառնիջաղանջի. դոքա շուտով կը փլատակվեն. բանը բազմութեան վերայ չէ: Դուք ես, յուսով եմ, որ մնալու չէք անընկեր: Թող միայն լաւ դուրս գրվի Ձեր առաջարկութիւնը ժողովի մասին և սրտով կարդացվի և պաշտպանվի ժողովի առաջև. կամին նոքա ընդունել Ձեր պայմանքը. այդ ուրիշ բան է. եթէ ոչ, ապա մենք կը կաղմենք մի այլ ժողով և գործեր կը կատարենք, որոնց առաջև գեթին կը մտանեն այդ մարդիկը: Լաւ իմացէք, որ աշխարհ կառավարողը խելքն է, հասկացողութիւնը և բարեմիտ ազնիւ կամքը. դոքա ամենից զուրկ են. ուրեմն ինչ պիտի առնեն: Ձեր տուած արժաթը յետ առեցէք, եթէ Դուք մասնակից չէք գործին:

Չզուեցայ միանգամայն գոցա գրած առաջարկութիւնից (ПЛАН), կարդալով նորան ուշադրութեամբ: Այդ աղճատ բանը պիտի գրած լինի Տավրիշովի խելքի տիրոջ պէս մարդ: Ծայրէ ծայր դատարկաբանութիւն է, անոճ ու անհամ ու անմիտ. բայց ամենևին արժանի այն ժողովին, որի մէջ խօսք ունին Եզեանցը և Տավրիշովը:

Ձեր եղբայր

22 Նոյեմբ. 1860.

Ս. Նազարեանց.

Մոսկվա:

## 5.

Ազնիւ բարեկամ

Մ. Փանեանց.

Ահա ուղարկում եմ Ձեզ մեր ընկերութեան վերայ գրած մի ճառ<sup>1)</sup>, որ այդ բանի խորհուրդը անորոշ մթութեան միջից դուրս պարզվի և պայծառանայ աչքի առաջև որպէս պտուղը իւր փեճիկի միջից: Այնուհետև ամենեքեանքս վերահասու կը լինինք թէ ինչ բան է մեր կամեցածը, կամ թէ ինչ կամիմք մեր. Մեր հայերը մինչև

1) Փանեանցի թղթերի մէջ չգտանք այդ ճառը: Յ. Տ. Յակ.

այժմ չեն մտածել այդպէս. այսինքն իւրեանց կամեցածը նախ և յառաջ պարզապէս հասկանալ, որ կարելի է միայն, մի պայծառ ձև ու կերպարանք տալով իւրեանց մտածութեանը: Եւ հարկաւոր համարեցի այդ բանը և գրեցի իմ մտածութիւնքը մեր ընկերութեան մասին, ուստի կարող եւս դու տեսանել թէ ինչպէս է այն ճանապարհը, որի վերայ պիտոյ է մեզ դիմել գէպ ի մեր նպատակը: Դու կը կարդաս սորան ուշադրութեամբ և կասես ինձ քո կարծիքը, զորան գրել եմ եւ այն խորհրդով, որ կարդացվի հրապարակաւ ընկերութեան մէջ, որ ամեն մինը պարզ ու պայծառ տեսանէ բանի խորհուրդը և իմանայ թէ ինչ էր իսկապէս իւր և հասարակութեան կամքը: Միաբան հաւանութեամբ պիտոյ է ընդունվի և ստորագրվի դա, կամ թէ մերժվի, եթէ մերժելի էր, նոյնպէս միաբանական վճռով:

Եւ ուղարկում եմ Ձեզ նոյնպէս Հիւսիսափայլի ստորագրութեան կամ ընկերագրութեան թուղթը գալոց 1861 թուականի համար. ինչպէս ինդրեցիք ինձանից: Աշխատիր Հայրենասիրութեան այգու մէջ որպէս քաջ մշակ, և տես, թէ ինչ կարելի էր բուսուցանել և կանաչեցնել. յուսաւոր լինենք և աշխատենք ազգի գալոց լաւութեան համար, մինք բարի խօսքով և յորդորանքով, միւսը առաքինութեան օրինակով, միւսը գրչով և իւր հոգեկան գանձերով: Ազնիւ բարեկամ, գործենք միաբան զօրութեամբ մեր կեանքի գործը այս աշխարհումս, մինչև ժամանակը մեր ձեռքումն է:

Ձեր անխարդախ սիրով Ձեզ սիրող  
1861 թուականի 25-ին Հոկտ. Ս. Նազարեանց  
Մոսկվայ.

6.

Իմ ազնիւ և պատուական բարեկամ

Մելքոմ Գասպարեան.

Մեր ժամանակում, մանաւանդ մեր մտակալքում մարդիկ սիրում չեն մտածել. շտապութեան և վազվզելու մէջ գէպ ի հազար կողմ, այլ և զանազան արտաքին հոգսերի մէջ, ասես թէ, մարդու սիրտը ցամաքած է, կամ թէ այլ ևս ժամանակ մնացել չէ ուշը և միտքը իւր վերայ ժողովելու, պարտականութիւն հասկանալու և պարտականութիւն լցուցանելու: Բայց դու դիտես, որ եւս մի փոքր ծանրաշարժ մարդ եմ. իմ ամենամեծ շտապութեան մէջ, ուր հարկ էր. կարող եմ տակաւին մի քանի բոպէ ուշադրութիւնս հաւաքել իմ վերայ և ամփոփել մտածութիւնքս, թէ և ամենայն հանգամանք իմ մտակալքում ժողովուած էին մի տեղ, իմ բոլոր խաղաղու-

Թիւնը վրդովելու, իմ բոլոր մտածութեան կապերը և միութիւնը քակտելու և խառնակելու, ինձ մի ամենևին մեքենայական մարդ չի նկելու համար։ Եւ այսպէս մի քաղցր պարտականութիւն ևս համարում իմ վերայ մատուցանելու Ձեզ իմ շնորհակալութիւնը այն բարեկամական եղբայրօրէն հոգաբարձութեան և աշխատակցութեան մասին, որով Դուք թեթևացուցիք իմ հայրական բեռը իմ դստեր հարսանիքի պատրաստութեան մասին, բոլոր հանդերձանքը և պատրաստութիւնքը որ Դուք տնօրինել էիք, ազնիւ և պատուական էին, հանդէսի օթեանը արքայական և մեծավայելուչ, այն մեր մեծատուն հարստականների ակնկալութիւնից վեր և շատ վեր, կրկնապատիկ աւելի կշիռ և յարգ պիտի ևս տամ Ձեր եղբայրական գործակցութեանը և օգնականութեանը այն պատճառով, որ ևս այդ բոլոր միջոցին, սիրտս արտում, հոգիս ցաւերով և խռովութեամբ մըրըկուած ու փոթորկուած, մեծ դժուարութիւն պիտի կրէի ուղղապէս և պատշաճապէս տնօրինել հարկաւոր պիտոյքը մի հարսանիքի հանդիսակատարութեան։ Ուրեմն կրկին և դարձեալ առ ի սրտէ շնորհակալութիւն Ձեզ ինձանից և իմ ամուսնու անունով։ Այս ցաւիցն ևս թեթևացանք Ձեր քաղցր բարեկամական և եղբայրական գործակցութեամբ և մասնակցութեամբ։ Ինչ որ դեռ ևս մնում է հոգալի, այդ միւսերի գործ է, միայն թէ մեր ժամանակի մանուկները հասկանային պարտականութիւն ասած բանը, բայց ի ամենայն թեթևամտութեամբ և անհոգութեամբ խաղաղ ուտելուց և վայելելուց, ինչ որ ծնողական գութը կարող էր և պատրաստ էր հասուցանել նոցա։ Ես քաղել եմ ժամանակի փուշերը, մեր զաւակները քաղել են ժամանակի մանուշակները և վարդերը մեր հոգաբարձութեամբ, բայց շնորհակալութիւն, երախտագիտութիւն, որ պիտի միայն ևրևէր սիրոյ և մեծարանքի գործերով—ոչինչ չկայ։

Իմ ազնիւ և պատուական բարեկամ, մի խնդիր ունեմ Քեզանից, մի քանի օր յառաջ նամակ գրեցի դէպ ի Պետերհօֆ մի մարդու, կամենալով նորանից մի տեղեկութիւն որ հարկաւոր էր ինձ իմ կեանքիս հանգամանքի մէջ, և խնդիրը Օլինկայի, Ձեր սանիկի դաստիարակութեան ապագայի վերայ էր։ Այս մասին բերան առ բերան կը խօսեմ Ձեզ հետ, և կարծեմ Դուք հաւան մնաք այն տնօրէնութեանը, որ ևս կամէի առնել այդ մանուկի մասին։ Ինձ ցանկալի չէր, որ պատասխանագրութիւնը, որովհետեւ դա լինելու էր գերմաներէն, իբրև նամակ հասուցանուէր իմ տունս և ընկնէր գուցէ թէ այլ մարդու ձեռք և բացուէր ու կարդացուէր, վասն որոյ խնդրեցի այն մարդուց, որ նա իւր նամակը ուղարկէր դէպ ի Մոսկվա Ձեռ հասցեով։

Ուրեմն եթէ մի քանի օրից յետոյ ստանաք Պետերհօֆից նամակ Ձեր ազրեսով, աշխատ և ղէք պատշաճաւոր կերպով հասուցա-

նել իմ Չեոքը, այսինքն անձամբ անձին տալով ինձ: Իմ խորհուրդս առանց դժուարութեան զլուխ տանելու համար, հարկաւոր համարեցի այսպիսի ընթացք. դժուարութիւնք կը մնան տակաւին, որովհետև իմ մօտակալքս ամենայն բանի հակառակ են, որ կարգ ու օրէնք էր, խելացի գործ և մի փոքր աւելի այլապէս տնօրինուած, քան թէ իւրեանց ամենեին անտնօրէն և բարձի թողի արած կեանքը:

18-ին Յունիս 1865.

Մոսկուա.

Չեք

միշտ հարազատ Ս. Նազարեան.

7.

3-ին Յունիս 1866 թուակ. Նախիջևան.

Իմ ազնիւ կըրայր

Մելքում Գասպարեան,

Ահա 2000 և աւելի վերստ, ասես թէ մի կախարդութեամբ, որոյ շարժող զօրութիւնը չոգիք են միայն, մարդկային հանձարի կառավարութեան տակ զրած, բաժանում են մեզ միմեանցից, և ես հիւսիսից յանկարծ տեղափոխուած եմ մի երկնակամարի տակ, որ իւր հարաւային զրութեամբ ներգործում է իմ վերայ մի առանձին կերպով: Նկարագրիք մտքով մի քաղաք, ըստ իւր արտաքին կերպարանքին բաւական ցիփիլիզացած, վայելուչ և շատ յարմարաչէն տուներ, այնպիսի կարգերով, որ պատշաճ էին մի այրող արեղակի ճառագայթների տակ, կառք ու ձիեր պատուականներից, որ ամեն մի փոքր ի շատէ կարող մարդ պահպանում է այս տեղ, առանձինն կարգադրութիւն սենեակների, որ ըստ մեծի մասին պահվում են կիսալոյս պայծառութեան մէջ պատուհանների առանձին շինութեամբ, ըստ որում գոցա տախտակները շարժական և խոտորնակ ճեղքուած լինելով կարող էին վեր բարձրացնուել իրրև վարագոյրների, երբեմն մթացնել սենեակը, երբեմն պայծառացնել նորան: Այդ տախտակները ներկած են կանաչ գունով և բաղկանում են կտոր կտոր փայտերից, որ դէպ ի վեր խաղալով երկաթի գաւազանների վերայ, պայծառացնում են սենեակը, իսկ դէպ ի վայր ոլորելով նսեմացնում են նորան:

Գաղաքի զիրքը բաւական դար ու փոս է, շունի երկար և որոշ որոշ բաժանած փողոցներ, կամ թէ դոքա շատ սակաւաթիւ էին. փողոցներ լցուած աւազով և փոշով, այնպէս, որ մրրկի ժամանակ տանից դուրս գալ անկարելի է. քաղաքումը չկայ լուսաւորութիւն գիշերային մթի միջոցին. թէև այս տեղ ու այն տեղ կախած էին մի քանի լապտերք, բայց շատ սակաւ լուսաւորվում էին: Մարդիկ

այս քաղաքում, ինչպէս Ասիացիք ամենայն տեղ, ապրում են իւրեանց համար առանձին առանձին, մինչև դրացիք անգամ չունին մերձաւորութիւն միմեանց հետ:

Իմ ճանապարհորդութիւնս մինչև Նիժնիյ Նովոօրոզ և այդ տեղից Սամալիօտի Странникъ և Вѣстникъ անունով նաւերի մէջ, յաջող եղաւ. մեծ դժուարութեամբ հասանք Դոնին, ուստի առանձին ընկերութեան պատկանեալ Կոզակ անունով նաւի վերայ հասանք ամսուս 1-ին 8 ժամին երեկոյի, Նախիջևան: Դոնի և Վօլգայի նաւարկութիւնը միջնորդվում է եօթանասուն և հինգ վերստ տարածուն ցամաքային ճանապարհորդութեամբ երկաթուղով, Կալաչ տեղից սկսած:

Այժմ Նախիջևան ենք. իջեանած պ. Սալտիկեանի գեղեցկաչէն տանը և սիրելի գերդաստանի մէջ. Սալտիկեանի տունը դեռ ևս պատրաստ չէ բոլորովին, այլ բնակելի է միայն ստորին յարկը: Իմ կեանքս անցանում է այս տեղ, գրեթէ դրօսանքով միայն. գալստեանս օրին, թէպէտ և շատ անագան էր. 10 ժամը, գնացի իսկոյն տեսութիւն սրբազան առաջնորդ Եղիազարին, որոյ հետ մի 2 ժամի մէջ շատ ջերմ խօսակցութիւն եղաւ թէ վիճակի գործերի և թէ այլ ազգային հոգալի խնդիրների վերայ: Շատ բարի և ամուր ու քաջ հոգով մարդ է. մի խօսքով, կամի գործ կատարել, և ոչ թէ ուտել ու խմել ու պարկել միայն: Խոստացաւ ինձ լինել ապագայում առ ի սրտէ գործակից ամենայն բարի ձեռնարկութեան մէջ: Բայց շատ ցաւում էր, որ կարող չէր աւելի երկար տեսնել ինձ և խորհրդածել իմ հետ զանազան նիւթերի վերայ, ըստ որում միւս օրին ճանապարհ ընկաւ դէպ ի մեօգօսիա, ընդունելու վիճակի գործերը Այվազից <sup>1)</sup>: Նա մնալու է այնտեղ մինչև Յուլիսի մէջը, բայց ինձ անկարելի սպասել նորան այդքան երկար: Նա կամի ճանապարհորդել յետոյ դէպ ի Մոսկուա և Պետերբուրգ և ներկայանալ թագաւորին, բերան առ բերան խօսելու թագաւորի հետ:

Ես տակաւին շատ փոքր հայերի պատահած եմ, որովհետեւ ցերեկով այս տեղ, անհնարին ջերմութեան պատճառով, ման գալ կարելի չէ. բայց այսօր առաւօտուն վեց մինչև եօթն մարդ եկած էին ինձ այցելութեան և ջերմ խօսակցութիւնք եղան մեր մէջ, սրտէ առ ի սիրտ, մանաւանդ լաւ խօսել ու դատել գիտէ այս տեղ Եւչիեով պարոնը, մի բաւական պատանի մարդ, թէպէտ փոքր ինչ ալեղարդուած էր: Երեկ վայելեցին մօտս թէյ երկու ծանօթ քահանայք: Ես մտածում եմ մնալ այս տեղ ոչ աւել քան երկու շաբաթ և կարծեմ թէ բաւական էր ինձ այդքան ժամանակ փոքր ի

1) Գ. արք-եպիսկոպոս Այվազովսկու մասին է խօսքը. որը այդ ժամանակ տեսուչ էր Թէոդոսիայի Խալիպեան զպրօցում: Յ. Տ. Յակ.

չատէ զարթնցնելու մերայինների հոգին իւրեանց քնէած անհոգութիւնից և ցոյց տալու նոցա թէ հարկաւոր էր վերջ ի վերջոյ թողուլ անձնական ախտերը և գոցանից յառաջացած անվերջ խառնակութիւնը, և ձեռնարկել մի կարգաւոր և խելացի գործի, որոյ պտուղը լինելու էր ազգի բարոյական ու մտաւորական վերանորոգութիւնը. թէ իմ խորհրդակցութիւնքը Նախիջևանի խելացի հայերի հետ ինչ հետեանք և ինչ յոյսեր կը յարուցանէին, այս բոլորս մի երկրորդ, վերջին նամակումս Նախիջևանից կը յայտնեմ Ձեզ. բայց Դուք ինձ գրել կարող չէիք, որովհետեւ Ձեր նամակը հասանելու չէր հին Նախիջևան: Իմ ամուսնուս նամակում ասուած է, որ նա ինձ գրէ, ուղղելով նամակը դէպ ի թիֆլիզ Բոմանոս Պօղոսեան Նաղիրեանցի անունով:

Ես առողջ եմ և ամենևին խաղաղ, մտածելով որ ոչինչ նոր անհանգստացուցիչ իրողութիւն պատահած չէ իմ գերդաստանիս մէջ, մանաւանդ որ Ձեր պէս ազնիւ եղբայր թողել էի վերակացու և հոգաբարձու իմայիններին: Այս մի մեծ բաղաւորութիւն է, որ ողորմած աջը Ամենակարողի պարգևել է ինձ: Ես կարող չեմ ըստ բաւականին շնորհակալ լինել այդ երկնային պարգևի փոխարէն: Խնդրեմ շուտով գրել ինձ Ձեր անգին առողջութեան լուրը և ուղղել Ձեր նամակը, ինչպէս ասացի, թիֆլիզ. այնպէս որ այնտեղ հասած, ստանայի Ձեր գրուածը:

Խնդրելով Ձեզանից ընդունել իմ առ ի սրտէ եղբայրական ողջոյնը այս թէպէտ մարմնով հեռաւորութիւնից բայց հոգով և մտքով ամենևին մօտ մերձաւորութենից, այլ և աղաչելով Ձեզ Աստուածուստ առողջութիւն հոգու և մարմնոյ,

մնամ միշտ, իմ ազնիւ եղբայր, Ձեր հարազատ

Ս. Նազարեանց.

Սիրոյ և յարգութեան ողջոյն մեր բոլոր ծանօթներին մատուցանում է նամակիս գրողը:

8.

17-ին Յունիսի 1866. Նոր Նախիջևան.

Իմ ազնիւ եղբայր,

Անա 16 օր է. որ նստած եմ Նոր Նախիջևանում, գրեթէ մի լուս առանձնութեան մէջ, որովհետեւ այստեղ չկայ ոչինչ ընկերական կեանք, ըստ որում մինչև օրս եղած չէր հասարակաց զբաղեցուցիչ խնդիր այս տեղ: Բայց ես իմ լցուցանելի գործը կատարեցի արդէն, իմ սրտի մէջ յղացած խորհուրդը, որ էր ուր և իցէ Հայերի մէջ հիմնարկել մի լուսաւորութեան կենտրոն, ստուերագ-

բելով և յանձնելով բերանացի ազգի առաջաւորներին զանազան ընկերութիւնների մէջ, Երեք անգամ զանազան ընկերութիւնների և մասնաւորների առաջև կարգացի իմ գրած իդէայքը և բաւական ոյժ գործ զնելով, որ զոքս փոքր ի շատէ ներգործէին այդ քարացած հայկական սրտերի վերայ: Կարող չեմ ասել, թէ իմ ձայնը և սիրախառն արտասուքը ամենին անսպասուղ մնացին. ո՛չ, շատերը արտասուեցին իմ հետ քաղցր արտասուք, հասկանալով և մորմոքուելով մեր ազգային թշուառութեան վերայ: Մի նմանապիսի հոգեշարժ բանախօսութիւն առանց պատրաստութեան պատահեցաւ այն տեղի սուրբ Այա վանքում, ուր ժողովուած էր մեծ բազմութիւն և մի առանձին բարեգործական ընկերութիւն շնորհակալական պատարագ և ժամերգութիւն կատարելու, այլ և տօնախմբելու Մինիստրի հաստատութիւնը ընկերութեան կարգերի: Սեղանի վերայ, երբ որ սկսել էին բաժակներ ըմպել Թագաւորի և Մինիստրի կենացը, և քաղցրաձայն տիրացուքը օրքեստրի հետ միասին թնդեցնում էին օղը, ուղիղն ասեմ Քեզ, մի այնպիսի անսովոր ազդեցութիւն զղբոց սիրտս, որ ես կարող չէի լուռ մնալու տեցաւ կուրծքս և սիրտս կամէր դուրս թռչել. Ես տուեցի խօսքիս ազատ ընթացք և թևեր, որօտեցուցի արձակ օղը, ծառերի տակ գրած սեղանի վերայ, և այս տեղ թափեցան արտասուք թէ ատենաբանի և թէ բազմութեան աչքից: Պիտոյ է յուսալ, որ այսպիսի տեսարանք չեն մնալու առանց տեսողական խորին տպաւորութեան սրտերի վերայ և առանց պտղաբեր հետեանքի գալոց օրերում:

Քաղաքական հասարակութիւնը շնորհակալութեամբ և ուրախութեամբ ընդունեց իմ առաջարկութիւնը հիմնարկելու նոր նախիջկանում մի հայկական զիմնագիտն և, որովհետև Հայք ըստ մեծի մասին վաճառական մարդիկ են, տալով նորան իշխական (реальное) ուղղութիւն, բայց թոյլ տալով ուսուցանել նորա մէջ և լատինական լեզուն, իրրև հիմքը Եւրոպական նոր լեզուների, Ֆրանսիականի, գերմանականի և անգլիականի: Դորա մէջ պիտի աւանդուին բուն ազգային ոճով բոլոր ուսանելիքը ընդհանուր կրթութեան և մասնաւոր զիտութիւնքը վաճառական կոչման: Այդ զիմնագիտը պիտի ունենայ իւր համար և մի փոքր ի շատէ բարեկարգ տպարան Հայոց և Եւրոպական տառերով:

Գիմնագիտնի տարեկան ըլուծէթը (հաշուի ցուցակը) ունի 20000 մանէթ. դոցա 6000 մ. տալիս է քաղաքը իւր եկամուտքի և ծախքի աղբիւրներից. 4000 մ. հնդկական արծաթի տոկոսիք և օգուտք. 3000 մ. եկեղեցական արդիւնքից. մնացեալ 7000 մ. կը լցուցանեն լիաթոշակ և կիսաթոշակ աշակերտների հատուցմունքը (առաջինք ունին վճարելու 100 մ. իսկ յետինքը 50 մ. տարու մէջ) և քաղաքի հասարակութիւնը: Տպարանի կարգադրութեան համար որոշուած է

մի գումար 10,000 մ. որ մի անգամ պիտի վճարէ հասարակութիւնը, ժողովելով պողպակայի ճանապարհով:

Երբոր պատրաստ էր հողաբարձական և ընդհանուր ժողովի ներկայացուցիչներ և ստորագրութիւնը, այնուհետև նա կը ստանամ պաշտօնական կերպով քաղաքագլխից խնդիր գրելու և մշակելու այն պրօզրամման գիմնագիտնի, որ պիտի ուղարկուի առ մինիստրը հաստատուելու համար: Յոյս կայ որ բարեմիտ մինիստրութիւնը արգելք և խափան չլինի այս գործին, որոյ խորհուրդ այնքան սուրբ, այն և օգտակար է Ռուսաստանին. այսինքն յառաջացնել հայերից լուսաւոր և կրթեալ հպատակք:

Ահա իմ կեանքիս հայրենասիրական վաստակը որ վաստակեցի այս մի քանի շաբաթում, այն ոչ ձրի և զուր ուտելով այս տեղի հիւրասիրութեան աղ ու հացը: Քեզ, իմ ազնիւ եղբորս պիտոյ էր այս բանիս տեղեկանալ, ըստ սրում գա է և մի առանձին էպիգօք իմ կեանքիս դրամային: Իմ հասարակաց գործառնութեան մասին հաշիւ ու համար տալով Քեզ իմ հոգեհարազատ սիրելիս և հաւատարմ լինելով, որ շատ ուրախացուցիչ և ակորժելի պիտի լինի Քեզ, գալիս եմ այժմ պատմելու Քեզ, իմ առանձնական կեանքը: Ես ապրում եմ մեր հասարակաց, ազնիւ բարեկամ Գրիգոր Սալտիկեանի տանը, ամենեին այնպէս, ինչպէս իմ տանս և աւելի խաղաղութեամբ ու հանգարտ սրտով Պ. Սալտիկեանի ամուսինը մի պատուական կին, շատ մեղմ և սիրելի բարբով, կատարեալ մայր դէպ ի Սալտիկեան, թէպէտ մի փոքր թոյլ մայր, ինչպէս, անբաղդութեամբ սովոր են լինել մայրերը. որոնց ինչպէս Քեզ յայտնի է, ես հաւան չեմ: Բայց չսորհակալ եմ պ. Սալտիկեանից: Նա երբեմն գործ է զնում իւր բարեկամական-հայրական սաստը և խրատութիւնը դէպ ի Սալտիկեան: Սալտիկեանի ձեր մայրը մի կատարեալ օրինակ է մեր Հայաստանի հին և իւրեանց ձևով հազնուող կանանց. շատ մեղմ և արժանապատիւ անձն է, այնպէս քնքուշ սիրով ողևորուած դէպ ի Սալտիկեան: Եւ այստեղ կան շար և անպիտան երեխայք, որ դատարկութեամբ շրջումնն փողոցների մէջ, հայհոյում են միմեանց շատ պիղծ խօսքերով և լրբութիւն են գործում: Յաւելի է իմ սրտին տեսանել այսպիսի անհոգ արած մանուկներ, որ կարող են դատարակութեամբ աւելի սիրելի դառնալ: Սալտիկեանը ուղարկում է Քեզ իւր բարեկամական սիրոյ ողջոյնը, մաղթելով քեզ ամենայն բարեմասնութիւն:

Ես գալոց շաբաթին, այսինքն 23-ին ամսուս (հինգշաբաթի) կերթամ այս տեղից ծովով Տաղանրօղ, այս տեղ կը հասանեմ երկու ժամին ճաշից յետոյ. ուր կը մնամ մի օր ու գիշեր, և դուրս կը գամ այն տեղից 24-ին երեկոյին. 25-ին երեկոյին կը լինեմ Քերշ, իսկ 26-ին Պօտի. այս տեղից Բիօն գետի վերայով կանոցանեմ դէպ

ի Քութայիս և այս տեղից պօստամատի դիւրիժանսով կերթամ Թիֆլիզ, ուրեմն պէտք է յուսաւ, որ 29-ին ոտք կը կոխէի իմ հայրենական աշխարհի հողի վերայ:

Ես քաջայոյս եմ, որ Թիֆլիս հասած կը գտանէի այն տեղ Քոսիբեյի նամակը: Ինչպէս են ասորում մերայինք, ողջ է էմմա Ֆեօֆօրօֆնան, Օլիսկան և այն միւսը: Իմ կեանքս այս տեղ անցանում է շատ միատեսակ. այս տեղի ջրին, կեցութեանը և կերակուրներին սովորելու համար, պիտոյ է ժամանակ. բայց ամենից վատթար բանը այս տեղ այն է, որ խակ պատուղներ քաղում են և բերում են սեղան: Ես այս բոպէիս շատ ատոզջ չեմ, բայց յոյս ունեմ շուտով ամբանալ, և եթէ Աստուած կը պարգևէ, ամսուս 23-ին դուրս գալ այս տեղից:

Խնդրեմ ողջունել ինձանից մեր բոլոր սիրելիքը, Տէր Յարութիւն աւագերէցը, Շահազիզը և այլն:

Քեզ յարգող և սիրող

Եղբայր Ս. Նազարեանց

## 9.

6-ին յունիսի<sup>1)</sup> 1866. Թիֆլիզ.

Իմ աղնիւ բարեկամ և եղբայր,

Մելքոն Գասպարեան,

Ձեր երկու տխրալից և սիրալից բարեկամական նամակքը յուլիսի 21 և 23 թուականներից ստացայ և շտապում եմ յայանել Ձեզ իմ խորին շնորհակալութիւնը այն կարևոր տեղեկութիւնների մասին, որ գրել էիք ինձ իմ անբաղդ ամուսնոյ մասին: Ուղիղն ասեմ Ձեզ, մի ներքին ձայն վաղուց արդէն բարբառելով սրտիս մէջ, ասում էր ինձ, թէ իմ ճանապարհորդութեանս միջոցին մի անբաղդութիւն պիտի պատահի իմ գերդաստանիս մէջ, մանաւանդ

1) Մեզ թուում է, որ նամակի ամիսը՝ յունիս՝ սխալմունք է, պէտք է լինի 6-ին յուլիսի, որովհետեւ Նազարեանը իր յունիս 5 (թիւ 7) նամակում խոստանում է մնալ Ն.-Նախիջեւանում 2 շաբաթ եւ ասպանկնել Թիֆլիզ: Եթէ 4-ին հասել է Նոր-Նախիջեւան, 2 շաբաթ էլ մնացել է այնտեղ, ասպ ուրեմն նա ամենաշուտը Թիֆլիսում լինել կարող էր յունիսի վերջերին, բայց ոչ երբէք սկզբներին: Սխալմունք է, անշուշտ՝ նաեւ № 8 նամակում յիշած Փանեանցի 2 նամակների ամիսը, որովհետեւ յուլիսի 21 եւ 25 գրած նամակները Նոր Նախիջեւանում չէին կարող ստացւած լինել մինչեւ յինիսի—ըստ մեր յուլիսի—6. Անշուշտ յուլիսի փոխարէն այստեղ էլ պիտի լինի յունիս, 8. 8. 8.

ուշադիր լինելով էմմա Ֆեօդօրովնայի<sup>1)</sup> անհանդիստ բնաւորութեանը որ նորա միշտ և հանապազ բորբոքուած ջիղերի հետեանքն է եղած: Եւ ահա, ինչ որ խիթացել էի, 'Իուք ինքներդ գրումէք ինձ, ես վաղուց տեղեակ էի այդ թուլութեանը իմ ամուսնոյ և այդ պատճառաւ շատ անգամ տեղիք եմ տուած դորան, միայն թէ իբրև պատասխանատու հայր և հոգաբարձու իմ զաւակների, հարկադրուած եմ գտանուած երբեմն սաստիութեամբ հանդիպել մի կնոջ որ միշտ սրտնել է կռուի, ահաճութեան և պատերազմի ասիթ իմ գերզատանի մէջ: Շատ անգամ և լուռ ու մունջ եմ մնացած, թէպէտ և այդպէս հասած չեմ իմ նպատակիս: Որպէս և իցէ, այդ մի գծուաբին հարուած է իմ սրտիս լսել թէ իմ զաւակների մայրը ցնորուել է խելքից և պիտի յանձնուի բժշկի հոգաբարձութեան, գերզատանից դուրս, ապա Օլինկան ինչ պիտի լինի, ս'չ, իմ անբանող զաւակ, բայց ես կամեմ մտածել, որ Գուք այս մասին գործելու էիք կարևոր հոգատարութիւնը: Արդէն լաւ նշան եղած չէ, որ էմմա Ֆեօդօրովնայն կրկին և զարձեալ փորփորելով իւր մէջ, գտել է տարակուսանքի տեղիք բանկի բիլետների մասին, երբ ես ինքս ամենայն ապահովութիւն տուած էի նորան Մասկուայում, որ այդ անանուն ասուած բիլետքը որ Իւնքերից(?) և երաշխանորական վկայութեամբ նոցա ստուգութեան մասին, ստացուած էին, ոչինչ վտանգի տակ չեն, և ես քանիքը այդ բիլետներից ծախել եմ անոնց գծուարութեան, բայց նոր ի նորոյ մտածել դորա վերայ և դիմել առ Իւնքերը և հարցանել—այդ ցուցանուած է ահա, որ էմմա Ֆեօդօրովնայի միտքը խախտուել էր իւր կայքից: Եւ այդ ինչ սարսափելի լուր է, դանակ անուել և կտրատել կուսները: Կամ յետոյ խաբերայութեամբ հնար սրտնել կարձելու իւր կեանքը, բայց այդ բոլորը խորհրդաւոր բաներ են և ունին մի ներքին կատարելութիւն հիւանդի կեանքի և առողջ օրերի հետ: Յաւոււմ եմ խոստովանել Ձեզ, որ ես միշտ ա՛ն ու գողի մէջ եմ եղած մինչև այսօր, գանազան նշաններից գուշակելով, որ մի այդպիսի պատահար մի օր պիտի պղտորէր իմ կեանքի բոլոր բաղդաւորութիւնը, ցաւում եմ որ այդ պատահարը հանդիպել է իմ բացակայութեան միջոցին, երբ իմ օտք ու ձեռքը կապած են և ես իսկոյն թիւ անուել և թռչել տուն կարող չեմ: 3½ տարի ժամանակում, կապած ու կաշկանդած տանը, վերջապէս միանգամ ոտքս տանից դուրս դրած, և ահա լուռ եմ Ձեզանից այդպիսի ամենեկին ողբալի հանդիպումն: Կամք նախախնամութեան օրհնեալ լիցի: Բայց ես օրհնում եմ նախախնամութեան տնտեսութիւնը, որ գոնեայ ունիս՝ Ձեզ պէս բարեկամ կարեկից և օգնական ինձ իմ կեանքի սև օրերում, որ գոնեայ

1) Ստ. Նազարեանի կրկն է. Յ. Տ. Յակ.

կարող եմ տակաւին որպէս և իցէ մի փոքր յառաջ գնալ իմ ճանապարհորդութեանն ասպարէզի մէջ:

Ես այժմուս Թիֆլիզումն եմ, և կայ այստեղ ամսուս 3-ին, մեծ տառապանքով Բուլթայիսից հասանելով Թիֆլիզ: Ինձ ընդունեցին այս տեղ սէր և բարեկամութիւն, մի քնքուշ ազնիւ հարսն, բազմաթիւ սիրալից բարեկամք, որ օրէ օր աւելի գալիս են անսովորին, տալու և առնելու ինձանից բարեկամական համբոյրներ, քաղցր արտասուքով: Եղբայրս տակաւին այս տեղ չէ. բայց տելեգրամմա ուղարկեցինք Դիլիփան, որ և կամ էի Թիֆլիզ, և նա պատասխանում է այսօր, թէ ամսուս 10-ին լինելու է այս տեղ: Ես կը կարճեմ իմ մնալս Թիֆլիսում, որքան կարելի է, և կարծեմ որ այսօրից սկսեալ բաւականանային ինձ 2 շաբաթ, փոքր ի շատէ հոգալու այն լնտանեկան և ընդհանուր պիտոյքը իմ սրտի, որ այդքան տարի մնացած են անլուցանելի: Ես մտածում եմ Դիլիփանսով գնալ Երևան, ուր ի հարկէ կը մնայի սակաւ օրեր միայն, կը պատահեմ և էջմիածին մի քանի ժամով. ապա կը դարձուցանեմ ընթացքս դէպ ի Թիֆլիզ և այստեղից ուղղակի դէպ ի Բոստով Դիլիփանսով, ուր նաև նստած կը հասնէի Նիժնիյ. այլապէս, այսինքն Բաքուի և Հաշտարխանի վերայով պիտոյ էր ինձ շատ երկարանար ճանապարհը, ըստ որում Երևանից մինչև Բաքու բաւական մեծ ճանապարհ է, յետոյ կասպից ծովը ելն:

Թէ ինչպէս եղաւ իմ աշխատութեան հետեանքը Նոր Նախիջևանի մէջ, այդ բոլորը կը տեսանէք իմ վերջին նամակից առ Զեզայն տեղից. մի քանի բարի սերմեր գուցէ. թէ ընկան պողարեր հողի վերայ և իւրեանց ժամանակին կը կանաչեն և կը ծաղկեն եթէ եղաւ արժանաւոր հոգաբարձու, ջուր տուող և սնուցանող: Արդեօք կարելի էր որ և իցէ ազգասիրական խորհուրդ և ձեռնակութիւն յառաջ բերել ևւ պատրաստել սպազայի համար, Թիֆլիզում, որ աւելի հաւանելի է ինձ իւր աւելի գուարթամիտ և աշխոյժ երիտասարդներով, իւր աւելի եւրոպական կերպարանքով և կենդանութեամբ, քան թէ Նոր Նախիջևանը, այդ խնդիրը վճռել այս բոլորիս տակաւին կարող չեմ, որովհետեւ տակաւին խօսած չեմ հասարակութեան առաջաւոր մարդերի հետ. Նաղիբեանցը և Յովհաննիսեանցը այս տեղ չեն, գնացած են Բօրժօմ, բժշկական ջրեր գործ դնելու, և նոյն ինքն փոխարքան այն տեղ է գտանվում:

Թէ ինչ տպաւորութիւն իսկոյն գործեց և գործում է իմ վերայ Թիֆլիզը, այդ հեշտ է ասել. դա մի եւրոպէաբար կարկատած Ասիական քաղաք է. նոր քաղաքը իւր մի քանի կանոնաւոր և լայն ու արձակ փողոցներով շատ տարբերվում է հին քաղաքից, սորանեղ ու կեղտոտ անանցանելի փողոցներով. և նոր քաղաքը շատ աւելի ցուցանում է մի անյարմար կերպարանք, բոլոր արձակ վա-

քերքը, որ պիտի արձակ ու ազատ մնային, այնպէս լցուած ու միմեանց վերայ դիպուած են զանազան խառնիխուռն շինուածներով, որ ասես թէ բոլոր քաղաքը կացուցանում է մի խառնիճազանջ, որ խանդարում է և զրոււմ է մարդու երեակայութիւնը: Այսու ամենայնիւ մնում է ինձ թիֆլիզը մի աւելի ուշադրութեան արժանի քաղաք, քան թէ որ և իցէ Հայարնակ քաղաք. այս տեղ կան շատ սիրտեր, որ ջերմութեամբ զարկում են իմ համար, որ ես սիրել և գգուել համարում եմ մի առանձին կարիք իմ երկար տարիք ցաւեցած և վիրաւոր սրտի համար: Իմ ազնիւ, հոգեհարազատ եղբայր, ինչ գրեմ քեզ այն քաղցր և քնքուշ սիրոյ համար, որով գգվում է ինձ իմ ազնիւ հարսը, այն սիրոյ մասին որով մեր բոլոր ազգակաքը, իմ ծանօթքը և բարեկամքը ամենեկին յառաջամատոյց հանդիպում են ինձ, մի սիրտ որ այնքան տարի սրբացած է եղած իւր ընտանիքի սիրուց, այսօր նոր ի նոր կենդանանում է, ճօխանում է, զարդարվում է իւր հեռաւոր ընտանիքի և բարեկամների սիրով: Դու գիտես, թէ ինչպէս են եղած իմ օրերը Մոսկուայի մէջ. ես սիրել եմ առանց սիրուելու, այժմ սիրում եմ և սիրուած եմ փոխարէն: Արդարև և նախիջևանը անտէր չգտանուեցաւ ասիս. բայց ինչ է մի հիւրասիրական պատիւ համեմատելով մի քաղցր ընտանեկան սիրոյ հետ, մի առ ի սրտէ մեծարանքի հետ: Յաւելի է միայն ասել Ձեզ, որ այս բոլոր երկնաքաղաքացի քաղցր զգացողութիւնքը թունաւորվում են այն տրտում պատանարով, որոյ մասին տեղեկութիւն էք տալիս ինձ: Այսպէս է ահա տկար մահկանացուի բաղդաւորութիւնը այս աշխարհիս վերայ. անխառն գինի սահմանուած չէ մարդուս այս երկրաւոր ասպարէզի մէջ. պիտոյ է ըմպել կեանքի բաժակը, ինչպէս որ դա կայ, առանց տրտնջելոյ նախախնամութեան վերայ:

Վերջացնում եմ նամակս, խնդրելով Ձեզանից շատ սիրով ողջունել իմ սիրելի Սիինկան և հայրական յորդորս դէպ ի բարին իմ մոլորուած սրգի Ֆրիդրիկոսին, որին ես ինքս կը գրեմ այս օրերիս առանձին, ինչ որ հարկն է:

Իմ ազնիւ, եղբայրապատիւ բարեկամ,

Մնամ յաստուածուստ առ ի սրտէ մաղթելով Ձեզ ամենայն հոգևոր և մարմնաւոր բարօրութիւն, այլ և յանձնելով Ձեր արթուն, սրտցաւ ակնարկութեանը իմ անբաղդ գերդաստանի այժմեան դրութիւնը —

Ձեզ առ ի սրտէ սիրող  
Եղբայր Ա. Նազարեանց

Հասցէս Ձեր նամակի կը մնայ նոյնը, ինչպէս մինչև այժմ: Սաշինքան ողջունում է Ձեզ ամենայն սրտով:

Յ. Յէր Յակովբեան